

Մ Ա Ս Ի Ս

Շ Ա Ր Ա թ Ա թ Ե Ր Թ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՅԵՐԵՎԱՆ

1886 ՄԱՐՏ 22

ԹԻԻ 3814

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 22 ՄԱՐՏ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԵԼՈՑ ՀԱՇԻԻԸ

Սովելոց Խնամատար Կեդրոնական Յանձնաժողովոյ տեղեկագիրը լոյս տեսաւ այս շաբաթ : Առինք, տեսանք, կարդացինք եւ ուսումնասիրեցինք այդ տեղեկագիրը որոյ անունը կրնայ նաեւ ըսուիլ համարատուութիւն :

Այդ աշխատութիւնն որ երկու հարիւր երեսով հատոր մ'է, ամբողջապէս կարելի չէ ամփոփել այս նեղ սիւնակաց մէջ : Շատ հետաքրքիրը թող վճարեն տասն դահեկան եւ կ'ունենան մէկ հատ մը որով թէ՛ ազգային հոյակապ գործի մը պատմութիւնը կ'ունենան իրենց քով եւ թէ՛ նոր նպաստ մը ըրած կ'ըլլան սոյն Յանձնաժողովոյ, ինչու որ որքան որ տեղեկագիրը փակեալ ցոյց կուտայ հաշիւներն՝ փակուած չեն համարուիր, բաց են տակաւին եւ Սովելոց Յանձնաժողովն տակաւին կ'ապրի եւ պիտի ապրի որքան որ պէտք ըլլայ . նորա կեանքը արդիւնաբեր է ազգին, թո՛ղ շատ ապրի :

1880 յունվար 6 էն մինչեւ 1884 օգոստոս 31, ըսել է չորս տարւոյ եւ ութն ամսոյ մէջ նա հաւաքեց .

Կոստանդնուպոլսէն	դրշ. 654,683 . 50
Թուրքիոյ գաւառներէն	» 878,920 . 50
Արտասահման տեղերէ	» 2,022,315 . 25
	3,555,919 . 25
Զանազան հասոյթք	288,273 . 50
	3,844,192 . 75

Այս զանազան հասոյթք կը կազմեն դըլ-խաւորապէս շահը եւ զեղջ (150,585) եւ Թիճարէթ խանի հասոյթք (62,996) որոյ վրայ վարը պիտի խօսինք :

Գալով այս գումարին գործածութեան, կը տեսնենք թէ Սովելոց նպաստ անուամբ հետեւեալ գումարներն բաշխուած են .

Կարնոյ մատակարարութեան	778,239
Վանայ »	1,260,258
Սղերդի »	70,000
Մամպուր »	83,054
Տիգրանակերտի »	162,862
Բաղէշոյ »	112,929
Պելէճիքի »	119,435
Նիկոմիդիոյ »	81,788
Մանր մատակարարութիւնք	60,566
Կեդրոնական մատակարարութիւն	141,444
Գումար	2,870,575
Արկածելոց նպաստք	78,998
Կրթական »	156,421
	3,105,994

Այս ելից գումարն գեղջելով հասոյթից գումարէն որ կայ ի վերեւ, կը մնայ

738,197 . 75 դրշ .

որ հասոյթներէ յաւելեալ գումարն է :

Մնտից եւ ելից մանրամասնութեանց մէջ չմտանք, թէպէտ մեծ կարեւորութիւն ունին . սակայն մի բան միայն կը յայտնեն, այն է թէ Յանձնաժողովն ի՛նչպէս, ի՛նչ աղբիւրներէ հաւաքած է այդ դրամն եւ ի՛նչ կերպով իւր նպատակին գործածած է : Այս մասին չէ թէ միայն դիտողութիւն մը իսկ չենք կրնար ընել, այլ նաեւ աչքերնիս գոց վստահութեան քուէնիս կուտանք, ինչու որ ըստ մեր կարծեաց Յանձնաժողովն չէ թէ միայն դրամ հաւաքելու մասին շատ վարպետ եղաւ, չէ թէ միայն շատ խելացի կերպիւ սովելոց եւ տառապելոց բաշխեց իւր

հասոյթից մեծ մասն, այլ նաեւ այն մասն որ կրթական նպաստից և արկածելոց յատկացուց, այն է 2,300 ոսկի, յոյժ գովելի զգացմանց արդիւնք է, բնաւ պատասխանատուութիւն չբերեր նորա վրայ եւ ընդհակառակն մեզ գոհ կ'ընէ:

Բայց այս ամենը անցեալին կը վերաբերին: Ըսենք թէ Յանձնաժողովն ինչպէս գործածեց յաւելեալ 738,000 դահեկանը:

Թիճարէթ խանը գնեց:

Սա կալուած մ'է որ հաստատուն եկամուտ կը բերէ: Թիճարէթ խանին տիրանալու համար 681,599 • 50 դր., ծախք եղաւ, թէ՛ Ֆէրադի գործողութեանց համար և թէ՛ խանին գինն վճարելու համար (*):

Ուրեմն՝

Կալուածոց արժէք	681,599 • 50
Պատրաստ դրամ	54,478 •
Գանձելի սերկի մը	2,420 • 25

Գումար 738,497 • 75

Ահաւասիկ այս է Սովետից Յանձնաժողովի հաշիւն, զտելով եւ մաքրելով կարգ մը պահանջներէն որք թերեւս գանձելի ըլլան բայց մեզ համար չշարիւղի չեն:

Քիչ մ'ալ խստապահանջ ըլլալով, պէտք է զեղչներ այս յաւելեալ հարստութենէն 13,679 դրուշի գումար մը որ Հոգեւոյս Պատրիարքին գրաւոր յանձնարարութեամբ նպաստից վրայ յաւելեալ է, որով պատրաստ դրամն 40,797ի կ'իջնէ:

Շարունակելով՝ 1884 սեպտեմբեր 1էն մինչեւ ցարդ խանին վարձքերէ հասոյթներն, ըսել է 1 1/2 տարուան վարձքն, ըստ տեղեկագրին տարեկան 1 • Օսմ. 743 հաշուելով, 1 • Օսմ. 1,117 ոսկի կ'աւելցնենք պատրաստ դրամին վրայ եւ կը գտնենք 1,525 ոսկի պատրաստ դրամ որ այսօր պարտի գտնուիլ Սովետից Յանձնաժողովին քով եւ սակայն յորմէ պէտք է զեղչել նոյն միջոցին տեղի ունեցած ծախքերն, զորս չենք կարող գուշակել:

Ուրեմն շնորհիւ այս սքանչելի մատակարարութեան ազգն ունի այժմ ընտիր կալուած մը, 1,500 ոսկի պատրաստ դրամ եւ ամեն առաւօտ արեգական ծագումն տեսնելով կրնանք ըսել ուրախ սրտիւ:

(*) Խանը յարակից մասամբ 600,000 դրշի գնւեցաւ եւ 25,000 դրշ Մերձան փողոցի ճաշարանը:

— Այսօր երկու ոսկւոյ գումար մը կուգայ ազգին, եւ սա արդիւնք է Սովետից խնամատար կեդրոնական Յանձնաժողովոյ ազգասէր անդամոց ժրջան աշխատութեան:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍԹԸՐ, 1 Մարտ 1886

Այս երկրին մէջ հասարակաց կարծիք գոյացնող, զայն մշակող եւ պաշտպանող զօրութիւնք երկուք են: Զօրութեանց մին՝ մարդուս մտաւ որ կարողութիւնները լուսաւորելով օրուան խնդիրը կը պաշտպանէ կը ջատագովէ, մինչդեռ միւսը արդէն հասարակաց ուշը գրաւող խնդրոց վրայ կը ճառէ կա՛մ ընդդէմ եւ կա՛մ ի նպաստ օրուան խնդրոյն: Սոյն զօրութեանց մին է մամուլը, եւ միւսն է եկեղեցւոյն բեմը: Մասնաւոր նահանգի արդի կառավարիչը հրապարակաւ կ'ըսէր անցեալ օր իւր մէկ ատենախօսութեանց մէջ թէ՛ « Լրագրաց խմբագրական յօդուածները, որոնք հասարակաց կարծիք մը գոյացնելու խորհուրդով գրուած կը նշկատուին եւ ըստ այնմ կը պաշտուին ժողովրդէն իբր պատգամ երկնային, ոչ այլ ինչ են բայց եթէ խմբագրին անհատական կարծիքը, եւ իբր այն բոլորովին բռնապետական է նոցա (յրադրաց) գրութիւնը, երբ կը պահանջեն մեզնէ որ հաւատանք եւ ընդունինք ինչ որ իրենք իրենց անձնական տեսակէտէն կը տեսնեն եւ կը պաշտպանեն »:

Այս սխալ՝ եւ լուսաւորեալ նահանգի մը կառավարչին անվայել տրամաբանութիւնը երկրին ամեն կողմէն հարուածներ կ'ընդունի. կը ծաղրեն եւ ցաւ կը յայտնեն ամեն նշանաւոր լրագիրը որ ուրիշ կերպով ազատամիտ եւ ուսեալ անձ մը, մեր կառավարիչը, մամուլ մատուցած ծառայութեանց դէմ սոյննայի անճոռնի կարծիք մը ունենայ: Երկրին ամենէ բարձրագոյն համալսարաններէ ուսումնաւարտ, փաստաբանական դպրոցներու աշակերտ, եւ քաղաքագիտաց դասուն մէջ բարձր դիրք մը բռնող սոյն կառավարիչը ի՞նչ առթիւ եւ ի՞նչ պատճա-

աւաւ արտասանեց այն խօսքեր, հարկաւոր է գիտնալ. և երբ նոցա շարժառիթը գիտնանք, խնդիրը ինքնին երեւան պիտի ելնէ թէ մեզ շրջապատող պարագաները ի՛նչ զօրաւոր ազդեցութիւն ունին մեր վրայ մինչեւ իսկ կենսատու խնդրոց մէջ:

Կիրակի օրեր ուրիշ օրերու նման լրագիր հրատարակուելով է թէ ոչ. այս է օրուան ամենամեծ խնդիրը բոլոր նահանգաց մէջ: Սոյն հարցման հաստատական պատասխան կ'որոտայ երկրին մասնուլը միաձայն, և երբ հոս մասնուլը խօսի, որոտմունք իսկ կը լռեն: Բայց եկուր տես որ յետագէմ եւ պահպանողական եկեղեցին իւր բեմէն կ'աղաղակէ բարձրաձայն թէ՛ կիրակնօրեայ թերթը շարագրել, տպել եւ հրատարակել այնչափ մեղք է որչափ որ զայն ստանալով կարդալը քրէական յանցանք է: Գալով ժողովրդեան մեծամասնութեանը, ասոնք օրուան լրագիրը սնունդ կը նշկատեն, մտաւոր սնունդ մը, առանց որոյ անկարելի է ապրիլ իբր մարդ, ըլլայ այն կիրակնօրեայ թերթ թէ շաբաթօրեայ: Ուրիշ խօսքով հասարակութիւնը կը պահանջէ թերթ մը ունենալ, տարւոյն ամեն օրերը եւ ամեն եղանակի մէջ, ասի վերջնական է. իսկ այն խմբագիրն որ անկարող է գոհացընել իւր բաժանորդներն այս մասին, խմբագրական ասպարէզը թողով փախչելու է սնանկանալէ առաջ: Հիմա ինչպէս որ տեսանք՝ լրագրութիւնը, ընթերցողաց ճաշակին համապատասխանելով՝ կը շարունակէ իւր հրատարակութիւնները ամեն կիրակի. միանգամայն, կիրակի օրեր ալ հասարակ օրերու նման լրագիր կարդալ հարկ անհրաժեշտ ըլլալը հաստատելու հասարակաց կարծիք գոյացնել կը ջանայ եւ կը յաջողի. միւս կողմէն եկեղեցւոյն բեմը եւ նորա պաշտօնեայք կը դիմադրեն, կը վիճեն եւ ոմանք կ'անիծեն իսկ: Հռովմէական կղերը խոր լուծիւն կը պահէ այս մասին. հրէից ռաբունիք ուրախ են, թշնամեաց պարտութիւն ակնկալելով. մէջ տեղ ելնող եւ հոն մնացողներն են միաբնակ բողոքական քարոզիչներէ ոմանք, որոնց վճիռներէ մէկ քանիներ կը թարգմանենք ստորեւ, հաստատելու համար թէ որչափ ծաղրելի դըրութեան մէջ են արդէն, իրենց՝ մամուլը դէմ յարուցած անարդար վիճաբանութեանց առթիւ:

Քարոզիչներէ մին կ'ըսէ. « Ես իմ կիրակնօրեայ թերթս միշտ երկուշաբթի առաւօտ կը կարդամ »: Ուրիշ մը կ'ըսէ. « Կիրակնօրեայ լրագիր մը երբէք չը պիտի տեսնէի եթէ տարեկան բաժանորդ գրուած չ'ըլլայի »: Պօսթօն քաղաքի լուսաւորեալ քարոզչաց դասուն պատկանող պատուելի մ'ալ սա պէս կը խօսի անցեալ կիրակի օր. « Լըջօրէն խօսելով՝ կը փափաքեմ որ բոլոր պաշտօնակիցներս (բահանայք) դադրէին մամուլը դէմ խօսելէ. մամուլէ աւելի զօրաւոր թշնամի մը (սատանան) ունինք, որոյ դէմ տասն ու ութը դարէ ի վեր կը մարտնչինք առանց սակայն յաղթելու. միթէ մամուլը պիտի յաղթենք այժմ որ բեհեղձեբուղէ աւելի բազմաթիւ եղջիւրներ ունի »: Ուրիշ մը եւս. « Կիրակնօրեայ թերթը ջնջել, գոյութիւնը վերցնել երկրէն, ձեր իսկ ձեռաց մէջն է. մի՛ կարդաք, մի՛ գնէք եւ մի՛ վաճառէք զայն »: Ահա այս դասուն կը վերաբերի նաեւ մեր կառավարիչը եւ կը կարծէ օգնութեան հասնիլ կորուսեալ դատի մը, ծանուցանելով աշխարհի թէ խմբագրական յօդուածներ սոսկ անհատներու կարծիքներն են ոչ թէ հասարակաց կարծեաց արտայայտութիւններ: Բայց է՞ր այսչափ հակառակութիւն կիրակնօրեայ լրագրաց դէմ: Ահա պատասխանը կուտայ դարձեալ Պօսթօնի քարոզիչ մը: Կ'ըսէ. « Անցեալ կիրակի օր արեւմուտքի կողմերը աղօթքի ժողովի մը հրաւիրուած էի, ուր ինձմէ ի դատ միայն «Եւ անձինք կային, մեծ մասը՝ զիս տեսնելու հետաքրքրութեամբ եկած էին, մինչդեռ անդին անհաւատ քարոզիչ մը մտիկ ընելու համար երէ՛ հապարհ անձինք մուտք վճարելով հաւաքուած էին. նոյն օր եւ նոյն տեղ թատրոնի մը մէջ հապարհ անձինք օքսֆորդ մտիկ կ'ընէին »: Գինետուններ փակելու, զբօսավայրերը դրոցելու և դաշնամուրի ձայնն իսկ տանդ մէջ արգիլելով ժողովուրդը եկեղեցի հրապուրելու անյաջող կղերը այժմ ձեռնարկած է կիրակնօրեայ ընթերցանութիւնն եւս բոլորովին ջնջել՝ հակառակ հասարակաց կարծեաց եւ հակառակ լրագրաց օգտակարութեան առ ընդհանուր աշխարհ հաւասարապէս: Եկեղեցւոյն բեմը պիտի յաջողի՞ իւր ձախող ձեռնարկին մէջ, եւ ի՛նչ միջոց պիտի գործածէ գլուխ հանելու համար զայն,

դեռ անորոշ է. կղերի կողմանէ տակաւին գործնական միջոց մը չէ առաջարկուած, եթէ ոչ մամլոյ թշնամիք ընդունին հետեւեալ ազդու միջոցը, զոր Ձեռնիք Թեոֆիլ կ'առաջարկէ իբր լուծում սոյն խնդրոյն: Կ'ըսէ. « Կիրականօրեայ լրագիրները աշխարհի երեսէն բոլորովին ջնջելու մի միակ գործնական միջոցը՝ զանոնք դրել, շարել, տըպել եւ հրատարակելու պաշտօնը կղերն ինքը ստանձնելն է. յայնժամ կիրականօրեայ լրագիրը անմիջապէս աներեւոյթ պիտի ըլլան, որովհետեւ ոչ ոք պիտի ընթերցուն զանոնք... »: « Լրագիրք, կ'ըսէ ուրիշ հեղինակութիւն մը, գրիչ եւ մատիտ կը գործածեն, նաեւ ունին զոյգ մը մկրատ (ուրիշ լրագիրներէ հատուածներ ընդօրինակելու համար): Բայց ասոնցմէ ամենէն աւելի տաղանդ ունին, որ կը համապատասխանէ լրագրական գործունէութեան, որով խմբագիր մը կարող է ընթերցողաց ճաշակին յարմար լուրեր հրատարակել, զգուշանալով միշտ մի գուցէ անօգուտ ընդդիմութեան հրաւիրելով հասարակութիւնը ձանձրացնէ: Ասոնցմէ վերջը կուգան գիտութիւնը ընդհանրական եւ մասնագիտութիւնը, որոնց չափը որչափ մեծ է, լրագրոյն յաղորդութիւնն եւս նոյնչափ մեծ ըլլալ կ'ապահովէ: Բայց բոլոր այս ձիրքերով իսկ խմբագիր մը ողորմելի կացութեան մը մէջ պիտի գտնէ զինքը եթէ հաճոյական, հրապուրիչ եւ հրահանգիչ ոճ մը չը գործածէ լրագրոյն էջերուն մէջ, առանց որոյ կիրականօրեայ լրագիրը ալ սովորական քարոզներու նման չոր, ցամաք եւ անհաճոյ պիտի լինէին ընդհանրութեան »: Կը հետեւցնենք թէ այս անգամ եւս եւ այս գըռեհիկ վիճաբանութեան մէջ ալ ասպարէզը հասարակաց կարծեաց կողմը պիտի մնայ, բան մը զոր արդարութիւնն իսկ կը պահանջէր, որովհետեւ առանց լրագրոյ ոչ թէ օր մը այլ ժամ մը իսկ ապրիլ անկարելի է այս երկրին մէջ, եթէ չենք ուզեր մոլեռանդ յիմարներու նման ապրիլ եւ մեռնիլ: Պօսթօն քաղաքի երեք հարիւր քառասուն հազար բնակիչը կը հաստատեն մեր ըսածները երբ նոքա ամեն կիրակի երկու հարիւր հազարի մօտ լրագիր կը գնեն եւ կը կարդան, եւ շատ լաւ կ'ընեն:

Մ. ԹՕՓՀԱՆԷԼԵԱՆ

ՆՈՐԱՎԷՐ

ՍԱԲՈՒՆՁԻՒ ԱՔԾԱՆՈՂԸ

Ա.

— ԲՈՒՓ . . . ԲՈՒՓ . . . ԲՈՒՓ . . .

Երրորդ զանգը հնչուեցաւ. գլխաւոր վարիչը փչեց իւր մետաղեայ սրինգը, մեքենայն շէջրեց չշակը եւ շոգեկառքը տեղից շարժուեցաւ ԲՈՒՓ . . . ԲՈՒՓ . . . արձակելով:

Կայարանի կարմիր գլխարկով պետը, կանգնած հեռագրապետի հետ կայարանի առջեւ, սպասում էր որ մեքենայն աքծանից անցնէ: Մենք կայարանի դրան առջեւն էինք կանգնել, կայարանի ծառայողներն եւ մի քանի Սաբունչիներն էին:

Շոգեկառքը արագեցրեց իւր վազը, անցաւ աքծանից եւ մտնելով քարայրի մէջ, անհետացաւ մեր աչքից, իսկ աքծանողը դարձրեց աքծանը, իւր կանաչ դրօշակը գօտիից կախուած կաշեայ ամանի մէջ անցուց եւ մօտեցաւ:

— Վերջացաւ, ասաց նա և ժպտեց:

Բանդելէյը (աքծանողը) մի միջահասակ մարդ էր, ցանցառ մազերով, մորուսը գերծած եւ ընչացքը առանց սուր ծայրերի, դէմքը մի քանի խորշոմներով, կապոյտ աչքերով եւ առ հասարակ կոշտ գծադրութեամբ: Նա ունէր էր:

Մեր կայարանը կոչվում էր Սաբունչի. դա գտնվում է Բագու քաղաքից 12 վերստ միայն հեռու, նաւթի հանքերի մօտ: Սաբունչին գիւղ է կայարանի մօտ, որից դէպի վեր, մինչեւ Բալախանի գիւղը, ձգվում են հազարաւոր բրդածեւ քարիւղի հորերը, որոնց տեղական լեզուով « վիչկա » են կոչում:

Կայարանից սկսած մինչեւ Բալախանի, չորս կողմից նասոսների (*) և նաւթահորերի մէջ եղած շոգեշարժ մեքենայների շինքը միացած, գալիս էին խուզելու մեր կայարանի խորհրդաւոր լուծութիւնը, որովհետեւ նա շինուած էր քարիւղի հորերից հինգ հա-

(*) Զրհան մեքենայ, որ նէֆտ է մղում:

րիւր եւ գիւղից հարիւր քայլ հառաւորութեամբ դաշտի մէջ :

Ես այդ կայարանի մէջ 1882 թւին հեռագրական ծառայող էի :

Ահա թէ ոյք էին մեր կայարանի բնակիչք: Կայարանապետը մի վրացի էր եւ ունէր մի պչրասէր, մեծ աչքերով կին, որը եթէ դեղեցիկ չէր, գոնէ գրաւիչ էր: Հեռագրական ծառայողներս երկու էինք, ես եւ մի Շուշեցի հայ երիտասարդ. նաեւ մի ազգակից հեռագրապետ, որոյ բնաւորութեան մասին ոչի՛նչ նպաստաւոր խօսք ունիմ. նա մի թեթեւ երիտասարդ էր, շատախօս, չապլ ամէ՛ն բանի մէջ. ամսական յիսուն ռուբլի փող էր ստանում այդպէս մի տեղ, ուր քսան ռուբլիով կարելի էր փառաւորապէս ապրիլ, սակայն նա միշտ իւր սպիտակ ականները ցոյց տալով ծիծաղում էր եւ ասում, որ հարիւր ռուբլիից աւելի պարտք ունի. ծխում էր ծխախոտի ամենաթանկ տեսակը, ուտում էր վատ եւ օրական վեց շիշ գարեջուր էր խմում, իսկ ուրիշ վեցն էլ խմեցունում էր շոգեկառքի վարիչներին եւ մեքենագէտներին, մինչեւ իսկ կայարանապետին, որը զիջանում էր իւր կնոջ հետ նստիլ նոցա մօտ — ճանապարհորդաց սրահում, ձեռք առնել լուցկին եւ լուցկախաղ խաղալ: Քրիստափոր Դանիլովը (այդպէս էր հեռագրապետի անունը) միշտ նմաւում էր Բագրատձէի (կայարանապետի) կընոջ կողքին, մի ձեռքով լուցկախաղ էր խաղում, միւս ձեռքովը «սղմում» էր տիկնոջ ձեռքը սեղանի տակից, տարվում էր, դարե՛թի շիշեր բերել տալիս եւ խմում էր մէկ մէկու ետեւից:

Իսկ մենք, խեղճ հեռագրական հասարակ ծառայողներս, յենած հեռագրական սենեկի դրան, դիտում էինք այդ տեսարանը. բերներնիս ջրերը վազում էին. շէինք կարող մօտենալ, որովհետեւ թէ՛ չէինք համարձակվում եւ թէ՛ յանկարծ մեքենայն մեզ իրեն էր կանչում:

Մնում է մեզ մի քանի անձերի մասին խօսիլ եւ կայարանի բնակիչները լրանում են: Այն տեղ բնակվում էր նաեւ մի ուստիկան որը միշտ իւր խթանաւոր կոշիկը ամրապէս գետին էր խմում, սուրը թողնում դրդոց հանելու, եւ շարունակ ճգմելով իւր սպիտակ ձեռնոցները քայլում էր

սրահի մէջ եւ կամ դուրս: Ունէինք նաեւ մի պարսիկ գիշերապահ, որոյ ձախ ձեռքը կտրուած էր, երկաթուղւոյ տակ ընկած լինելով:

Մնում էին միայն Բանդեյլը եւ մի քանի հասարակ ծառաներ. վերջիններիս այնքան ուշադրութիւն դարձրած չը լինելով, չեմ կարող մի բան ասել:

Սաբունչիի կայարանը այսպէս էր չինուած:

Երկաթուղւոյ գիծը փոփոխվել էր գետնից տասն ոտնաչափ բարձր հողակոյտի վրայ եւ կայարանի ներքին յարկը մինչեւ այդ տեղ. իսկ վերինը նորանից միայն 20 ոտնաչափ բարձր. հետեւապէս վերին յարկից ներքինը իջնելու ո՛չ միայն կայարանի սրահից երկու անցք կար, այլ եւ հողակոյտի երկու կողքերից, որովհետեւ կայարանի շրջապատը դատարկ էր: Հիւսիսում եւ արեւելքում փոփոխվել էին նաւթահորերից դուրս եկած աղի ջրի լիճեր: Հեռագրական սենեակի դրան ուղղակի աջ կողքից իջնվում էր քսան աստիճան սանդուղներով դէպի ներքին յարկը, որտեղ բովէ բով գտնվում էին Բանդեյլի եւ ուստիկանի սենեակները եւ որոնց լուսամուտները նայում էին լճի վրայ:

Վերին յարկում — Բանդեյլի սենեակի գլխին գտնվում էին մեր երկու սենեակներն, իսկ ձախ կողմում կայարանապետի երեք սենեակները. հետեւապէս հեռագրական սենեակը նոյա կից էր:

Շոգեկառքը մեկնեց, սկսեց միջնանալ. արժանողը մեզ մօտեցաւ, իսկ կայարանապետը ներս մտաւ. բոլորը մեկնեցան:

Իմ ընկերիս հերթը չէր այդ օրը, ուստի նա քաղաք էր իջել եւ միւս առաւօտեան պէտք է վերադառնար:

— Վերջացաւ... ասաց Բանդեյլը, ժպտեց, վերարկուի թեւով սրբեց քրտինքը, երեսը դէպի հիւսիս դարձնելով փչող հովին տուաւ եւ նստաւ դրան մօտ մի պատուանդանի վրայ, որը ներքնատան վանդակաւոր լուսամուտի քիւն էր:

— Հը՛, Բանդեյլ՛, ասաց Քրիստափորը իւր ակօսանքը ցոյց տալով — ինչո՞ւ ես ըրտնեմ:

Քրիստափորը ամէն բանից առաւել սիրում էր միշտ ծիծաղել, միշտ զուարթ էր:

— Դժուար է... միմաջ արժանողը

ճակատը չփեղով — երբ մտածում ես, որ մի փոքր սխալ շարժում կարող է ամէն բան կործանել... խիստ դժուար է...

— Հէ՛, հէ՛, ծիծաղեց Քրիստափորը — երեւի վախենում ես...

— Վախենում... ի հարկէ... այլ և դողում եմ:

Եւ այդ ապացուցանելու համար, աք-ծանողը սկսեց դողալ:

— Լա՛ւ, դէ՛հ, շատ էլ վախնալու բան չէ, ի՞նչ կայ վախնալու. գունդի ծայրը կը բռնես, կը շրջես, աջ ձեռքումդ երկաթեայ ձողը եւ կանաչ դրօշը կը բռնես, իսկ ոտքդ գունտի կոթի վրայ դրած կը սպասես մինչեւ անցնի... ու վերջացաւ...

— Հը՛մ... մրմուռաց Բանդելէյը — շատ հեշտ է ասելը:

Եւ նա ելաւ, մտաւ սրահը, հանդար-տութեամբ իջաւ սանդուղներէն ու անհե-տացաւ:

— Բանդելէյը նորէն սկսեց տխրիլ, դի-տեցի ես:

— Գուցէ կնոջն է մտաբերում — պա-տասխանեց Քրիստափորը եւ անցաւ իւր սենեակը. իսկ ես, որ արդէն շոգեկառքի մեկնելու հեռագիրը տուել էի, ներս մտայ հեռագրական սենեակը եւ մտածեցի մի որ եւ իցէ բանով զբաղուիլ:

Բ.

Երեկոյանները առ հասարակ, երբ շըր-ջարեական հեռագիրը ընդունում էինք, ժողովուած նստում էինք մեծ սրահում սե-ղանի շուրջը եւ, ընկերս, հեռագրապետը, եւ խաղում էինք երբեմն լուցկախաղ, որ ա՛յնքան օգուտներ էր տալիս «պիւֆէ» պահողին, երբեմն թղթախաղ, որը պատ-ճառ էր լինում մանրավաճառին ծախելու իւր Ծ-Յ տարուայ պահած գոյնզգոյն շա-քարեղէններն, երբեմն էլ հանելուկաճեւ թուաբանական խաղեր, որից յետոյ միշտ մէջտեղ էր գալիս Փշփշացող եւ տըզտը-զացող սամավարը, չխչխկում էին գա-ւաթները, խխչում էր պարզ թէյը և մենք դէմքերնիս հովին տուած՝ խմում էինք:

Իսկ այդ երեկոյ իմ ընկերս քաղաքումն էր, կայարանապետը քնել էր արբած լինե-լով, նորա կինը իւր աղջկայ հետ ո՞վ գիտէ

ինչով էր զբաղուած. Քրիստափորը մտաւ իւր սենեակը ընեց եւ ես մնացի բոլորովին մինակ այդ ահագին շինութեան մէջ:

Նախ մեքենայի մօտ նստելով, կանչեցի հեռագրական փոստի հայ ծառայողին եւ մենք սկսեցինք խօսիլ հեռագրով, բայց իսկոյն Սուրախանիի հաստադրուիս ոռւս ծառայողը խտուրթեամբ միջամտեց մեզ եւ առարկեց, որ մեզ վրայ նկատողութիւն կը գրէ: — Խօսիլը հեռագրական մեքենա-յով, սաստիկ արգելուած էր:

Եւ թողի մեքենայն եւ ձեռք առի հե-ռաճայնը, որը մինչեւ Բալխանի եւ «Պը-ետարայ» կրտսւս» հանքախմբերն էր ձգե-վում, կանչեցի Բալխանիի պարսիկ հեռա-գրապետին, ուղեցի խօսեցնել, բայց ինչ-պէս երեւում էր, նա լաւ տրամադրութեան մէջ չէր, ուստի առարկեց, որ հեռախօսը վար դնեմ:

Ուրիշ ի՞նչ անէի ուրեմն. կարդալու գիրք իսկ չը կար:

Քիչ մը ելայ դարաստին վրայ, պտը-տեցի, բայց չուտով դորանից էլ ձանձ-րացայ:

— Ա՛հ... յանկարծ յիշեցի ես — ժա-մանակն է Բանդելէյին տեսնել...

Եւ ես շտապմամբ սրահը մտայ, ներքին յարկը տանող սանդուղներից ցած իջայ եւ ուղեցի մտնել Բանդելէյի մօտ, բայց նորա սենեակից մի առնական կատաղի ձայն լսե-լով, կանգ առի:

Շուտով որոշեցի նոյն իսկ Բանդելէյի ձայնը. նա դուրս էր գալիս շա՛տ կատա-ղի, հետզհետէ մեղմանում և խապոտ մըն-չիւնի էր փոխվում, ապա մրմունջի, եւ մէ-կէն ի մէկ սաստիկ բարձրանում էր:

— Ո՛ւմ հետ է խօսում, մտածեցի ես եւ սանդուղի մօտի լուսամուտից աչխա-տեցի դէպի ներս սենեակը նայիլ, բայց ներսից լուսամուտի սպիտակ վարագոյրը ձգուած էր:

Պէտք էր բաւականանալ միայն լսելով, ուստի կծկուեցայ եւ ակտիւս լուսամուտի վանդակին մօտեցրի. Բանդելէյը սենեակի մէջ կատաղի կերպով քայլում էր:

— Ահա՛ քեզ... ասում էր հա, ի՞նչ անենք, դնա՛, կ'ուզես բոլորովին դնա... հոգս չէ... ի՛հ, որո՞յ հոգն է, կորսուել'ր ուր որ կամենաս... դժոխքի ծայրն իսկ

կամ արքայութեան մէջ տեղն էլ գնաս՝ փոյթըս չէ . . . տես ի՞նչ եմ ասում, Թամա՛ր, լսո՛ւմ ես, խօս չե՞ս քնել . . . հը՞, հոգի՛ս, չը քնեցի՞ր, չէ՞ . . .

— Թամա՛ր . . . մրմուռացի ես — ուրեմն Թամարը եկե՛լ է, ի՞նչպէս մենք չը տեսանք :

Եւ ես շարժուեցայ, որ գնամ այդ լուրը Քրիստափորին հասցնեմ, բայց Բանդելէյը, որը լուել էր, նորէն սկսեց խօսել, քաղցր, գգուելի ձայնով . նա չէր քայլում, այլ ինչպէս իսկ ինձ թփում էր՝ նստել էր, որովհետեւ լսել կարծեցի աթոռի ճռճուցի ձայներ :

— Այդպէ՛ս . . . ասում էր Բանդելէյը — մի՛ քնել, հոգի՛ս, միթէ այդպէս չա՛տ կը քնեն . ես ամբողջ գիշերը կարող եմ արթուն մնալ քեզ լսելու, դու մի ժամ չե՞ս կարող . . . լսո՛ւմ ես . . . լա՛ւ ուրեմն, տես ի՞նչ եմ ասում . . . ի՞նչ, ասում ես որ ըսեմք տանձումէ, ուղում ես քնե՛լ . . . է՛հ, ե՞ս ինչ անեմ, ես ուղում եմ որ լսես ինձ . . . ա՛յ . . . խօսքս կարճ է . . . ուղում էի հարցնել թէ ո՛րտեղ էիր գնացել մինչեւ այժմ . . . հը՞, ի՞նչ, ի՞նչ, քաղա՞ք, ասում ես Բագո՛ւ էիր գնացել . . . ես շատ վատ բաներ լսեցի ըս Բագուի մէջ վարած կեանքիդ մասին . . . ասում ես որ բոլորը սո՛ւտ են . . . կարելի է, ես չե՛մ պնդում . . . մարդիկ չա՛տ են սիրում լուսն ուղտի փոխել . . . բայց ի հարկէ գոյութիւն չունեցող լուսն չի՛ կարելի ուղտի փոխել . . . հը՞ . . . ասում ես ոչինչ գոյութիւն չունէ՛ր . . . հա՛, հա՛, հա՛ . . . Լուկա՞սը, Լուկա՞սը . . . գիտե՞ս նա ինչե՛ր պատմեց :

Բանդելէյը, ինձ այնպէս թուեց, որ կռացաւ և շէնջեց մէկի ականջին :

— Ասում էր որ . . . ո՛ր, աւելացրեց նա ձայնը հետզհետէ բարձրացնելով — որ դու սիրում էիր Դանիլովին, Դանիլովին . . . հա՛, հա՛, հա՛, Դանիլովին . . .

Լուսնի տիրեց, յանկարծ մի հեծկըլտալու ձայն լսեցի և ապա մի արտասուալից առնական ձայն, որ ասում էր .

— Հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, Դանիլովին . . . հի՛ւ, հի՛ւ . . .

Նորէն լուսնիւն . մէկէն ի մէկ տեղիցս վեր թռայ, որովհետեւ լսեցի մի աթոռի հարուածի ձայն, ապա կոտրուելու, կոր-

ծանման, եւ նոցա միջից մի կատաղի շեշտով Բանդելէյը գոռում էր .

— Դու սիրո՞ւմ էիր Դանիլովին . . . սիրո՞ւմ էիր . . .

Եւ ամէն մի վանկին հետեւում էր մի բռնն հարուածի, ամանների փշրուելու եւ կարասիների կոտրտուելու ձայներ :

Ես վեր վազեցի սրահը եւ մտայ Քրիստափոր Դանիլովի սենեակը . Պ. հեռադրապետը մի՛ շապիկով միայն, պառկած անկողնոյ վրայ, մի գլանիկ բերնին ծխում էր եւ բերնից հանած ծուխը աշխատում էր օղածեւ դուրս հոսեցնել :

— Ելի ի՞նչ կայ, հարցրեց նա ծիծաղելով :

— Թամարը . . .

— Ի՞նչ . . . գոչեց նա նստելով — Թամարը . . .

— Եկել է այստեղ :

— Խեղճեցե՛լ ես, գոչեց Քրիստափորը — Թամարը ե՞րբ եկաւ, որ մենք չը տեսանք, չէ՞ որ նա Բագու էր :

— Չը գիտեմ, Բանդելէյի սենեակումն է, նոքա կռվում են աթոռներով :

— Ա՛. . . դիտեց նա — ուրեմն ցածից լսուող այդ թրխկոցները . . .

— Կարասիքի կոտրտուելու ձայներն են, վրայ տուի ես :

Նա հագաւ իւր վերարկուն եւ մենք արագութեամբ ներքին յարկը իջանք :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

(Մանգեան Երկրի Բնակ)

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԵՄ ՓԱՋՈՑ ԱՌԱՋԻՆ ՕՐԵ

Ի ՍՂԵՐԴ

Բարեկենդանի աւուրց մէջ, մանաւանդ վերջնոյն, մարդ չէ կարող այնքան հետաքրքրական երեւոյթ նշմարել Սղերդի աղքատ փողոցներուն մէջ, որքան բազմաթիւ մանկանց ու պատանեաց խմբակներու անդադար երթեւեկումն, որոց ի՞նչ ազգէ եւ ի՞նչ կրօնէ լինելն չէ կարող ճանաչել անծանօթ ոք : Զի ամենքն կը խօսին մէկ լե-

զու՝ արաբերէն, եւ կը կրեն հագուստի միեւնոյն տարազ՝ քրդական: Սորա ախտութիւն կը չըլին թաղէ թաղ, փողոցէ փողոց, իրենց ձեռքերէն եւ ուսերէն կախուած եւ՝ առհիւղ մեղրամոմերու շարքերով, որ զարդարուած են շղարչի եւ գունաւոր ու ոսկեգօծ թուղթերու երիզներով եւ այլ զանազան սեթեւեթներով: Յոյժ հետաքրքրաշարժ սոսնալաճաւ մ'է սա, որ կ'սկսի վաճառող մանկանց եւ ամեն կարգի անձանց մէջ ի պատրաստութիւն մեծ պահոց առաջին աւուր:

Մեծ պահոց առաջին աւուր առաւօտն բարեւոտեցաւ Խալամներէն ճիշդ իրենց Բաշա Պալաթի առաջին երեկոյին նման: Հրացանաց բազմակրկնակ բոմբիւնը զարթուցին զմեզ ի քնոյ, եւ ահա սկսաւ հրաշալի օդը: Խալամը սիրտ ի խինդ անդադար օդը կը դըրդեն ու կը թնդացունեն, այն ինչ քրիստոնեայք այցելութիւններ կը փոխանակեն միմիանց ի շնորհաւորութիւն մեծ պահոց: Այս տեսարան կը տեսէ առաւել քան երեք ժամ:

Յմա կը յաջորդէ մի այլ առաւել տարօրինակ և ծիծաղաշարժ հանդէս: Բաղմաթիւ և անհամար թուրքեր հագուած, զինուած ու զարդարուած, բոլորն ալ հեծած սարքեալ ու պաճուճեալ ձիերու, ջորիներու եւ էջերու վրայ խռռնամբոխ կը հոսին Սղերդի փողոցներէն, որոց աղաղակներն ու կենդանեաց զանգակներու ու բոժոժներու ձայներն մի տարօրինակ աղմուկով կը դըրդեն բոլոր քաղաքը, եւ որք պահանջելով նուէրներ կ'ստանան ամեն կարգի անձերէ: Մրգավաճառք բոլոր տարւոյն մէջ չեն կարող եւ ոչ մի օր այնքան վաճառել որքան այն օր, որոց խանութներն կը պարպուին հինցած ու փտտած պտուղներէն:

Խուն ինչ յետոյ ողջոյն քաղաքն փոխադրուած է Բաշա-Կաթաթ (քարի գլուխ) կոչուած տեղն: Սա Տիրքիսի օժանդակ Պոհտան գետի աջակողման դահաւանդակի վրայ լեռնադաշտ մ'է Սղերդէն մի ժամու չափ հեռի, որ վիճակուած է մեծ պահոց առաջին հանդիսավայրն լինիլ: Անհամար բազմութիւն մը կը գրաւէ բոլոր դաշտն. տեղւոյս Մէ-Բէ-Կաթաթ վսեմ Բաշատ պէյն եւս մի մասնաւոր դիրք գրաւած է կարգ մը քաղաքական ու զինուորական բարձրաս-

տիճան պաշտօնէիւր ընդ վրանօք եւ վաշտ մը զօրօք: Եւ ահա կ'սկսին ձիարշաւք, զինախաղութիւնք եւ ազգի՝ ազգի զուարճութիւններ. բայց ես առաւել բարեւոտեան ժխոր մը կարող եմ անուանել զայս քան հանդէս, իսկ դործոյն անտեղեակ եւ անծանօթ ումեք՝ պիտի թուէր մի կատաղի մարտ: Եւ արդարեւ ըստ պատմութեան ոմանց նախորդ տարիներու մէջ իւր զոհն եւս ունեցած է այս հանդէս:

Այս ամենայն կը կատարուին Թուրքաց կողմանէ ընդ դէմ Քրիստոնէից, որ կը կոխեն մեծ պահոց սանդուխի առաջին աստիճանն, բայց այնքան սովորական դարձած, որ Քրիստոնեայք եւս անխտիր կը մասնակցին սոյն հանդիսին եւ զուարճութեանց, որ կը տեսէ ց'երեկոյ:

Սակայն դեռ չը լրացաւ, զի հանդիսիս ամենամիայլուն արարուածն կը ներկայանայ օրուան երկոտասաներորդ ժամուն ի մտանել արեգական: Սոյն պահուս քաղաքին ամեն կէտերէն կը վերսկսին հրազինուց պայթմունք, օդը կը դըրդի ու կը թնդայ ամպերու գոռուժի նման, այլ եւս բոլոր քաղաքը վերածուած է ի վերայ տանեաց. նոյն իսկ միջոցներու ծայրերն կը կրեն հոծ բազմութիւն, որոնք ելած են ի տես հրաշափառ հանդիսին:

Հրախաղութիւնք՝ կայծականց ու սուպներու նման մերթ օճապտոյտ մերթ կամարածեւ կը փողփողեն եթերը, եւ մերթ ուղղակի դէպ ի վեր սուրալով կարծես կը բարձրանան բարեւել զաստեղս: Անթիւ մի մեղինաց ընդհանուր լուսավառութիւն մը սքանչելի տեսարանի մը մէջ կը դնէ ամբողջ քաղաքը: Տանեաց վրայ խռռնած ամեն կարգի անձինք, մանաւանդ մանկունք եւ աղջկունք, մեծ ախտութիւն եւ եռանդով կը շարժեն ու կը բորբոքեն նախապէս այլ եւ այլ վառելի նիւթերէ պատրաստուած քահեւորն (մաշալ), յորոց սահամար կայծեր քամիէն յափշտակեալ միջնորդը կը նկարեն լուսեղէն փոշիներով: Այսքան շարժում, այսքան կենդանութիւն եւ ոչ մի օր ունեցած է Սղերդ: Բոլոր քաղաքը կը դըրդի ու կը շարժի, հրդեհի մատնուած է կարծես, որ առաւել կը հրճուեցունէ քան կը տրտմեցունէ իւր հանդիսատեսներն, որ փոխանակ շիջուցանել քանալու՝ առաւել կ'արծարծեն ու կը բորբոքեն:

Հրազդինուց ձայներու գլորմանց մէջ կը խեղդուէին այն բոլոր աղմուկներն ու աղաղակներն, որ կը բարձրանան թէ՛ իսլամ⁽¹⁾ եւ թէ՛ քրիստոնեայ⁽²⁾ մանկանց բերաններէն, որ փոխադարձ հեղնութիւններ են միմիանց եւ յորոց մէկ երկուսն կը նշանակեմ աստանօր հանդիսիս նպատակին վրայ որոշ գաղափար մը տալու հետաքրքիր ընթերցողաց:

Իսլամ մանկունը առանց ընդհատելու իրենց լուսավառութեան գործն՝ կ'աղաղակեն ու կ'եղանակեն անընդհատ:

Ալա գահր Էլ Նասարէ՝ քըլ սապահու սաքարէ,
Ալա գահր Էլ Քէշէ՝ Էլ Եօվմ մօերթաշէ:

Թարգմանաբէն (*)

Հակառակ քրիստոնէից՝ որ ի քնոյ գինով զարթնուն, Հակառակ քահանայից՝ որ անընթերիք մտնեն ի քուն: Եւ քրիստոնեայ մանկունը՝ կը պատասխանեն նոյն ոճով արաբերէն:

Սոյն տարօրինակ հանդէս կը տեսէ ժամերով եւ կը կրկնուի երեք երեկոյ:

Սըէրֆ Գ. ՍՐԱՊԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎԵՏԱՀԱՐ ՔԵՐԹՈՂՆ ՈՒ ՄՈՒՍՅԱՆ

ՔԵՐԹՈՂՆ

Գիշեր է. յերկինս աստեղը կը շողան, Անդորր լուսթիւն կը տիրէ համայն, Հողմիկըն մեղմիկ իւր թեւին ծայրով Գլուէ սօսիներն. դաշտէն անցնելով: Ի հեռուստ մնջէ անտառ մթադին, Կերանց գագաթէն ստուերը տարածուն. Եւ արծաթափայլ լըճակին վըրայ Բարակ ու նրբին մշուշ կը տեղայ: Հոգւոյս համակերպ արտում է բնութիւն. Մեկամաղձութեան քօղ մը տխրասուն, Կը ծածկէ համայն զերկին եւ զերկիր:

(1) Քաղաքիս մէջ իսլամը կը հաշուեն իբր 2,500 տուն:

(2) Քրիստոնեայք կը հաշուեն իբր 520 տուն, յորմէ 380 տուն Հայ (30 տունը բողոքական), 40 տուն Քաղղէացի եւ 40 տուն Ասորի են:

(*) Եղած Թարգմանութիւնն առաւել ըստ իմաստին է քան բառական:

Այլ... բլրին վրայէն ամպ մը ոսկեծիր, Փայլիլուն շողիւնս արձակէ չորս դին. Ո՛հ, տեսի՛ք մ'է այս, ցնորք մտացածին. Լոյս մի քաղցրահոս շրջապատէ զիս, Հրեղէն կերպարանք մ'երեւայ աչքիս, Հանդերձքն ոսկեփայլ, սիրաբաց աչկունս, Ժպիտ վարդագեղ փայլի ի շրթունս. Հրեշտա՞կ մ'է արդեօք, ոգի՞ մ'երկնային, Թէ գիւրանուաղ երազ մ'անմեկին:

ՄՈՒՍՅԱՆ

Ոչ ցնորք է, ոչ երազ,
Եւ ոչ տեսի՛ք, ո՛ր Քերթող,
Այլ Մուսայդ է գեղանազ
Որ արդ կուգայ սիրտ ի դող
Քեզմէ խնդրել հեշտ երգեր
Եւ մտերմի համբոյրներ:
Տե՛ս, այս գիշեր բնութիւն
Վանէ ձմեռն եւ զձիւն,
Գարնան հետ վաղ առաւօտ
Զարթնուն ծաղկունք քաղցրահոտ:
Թռչունն զուարթ սստին վրայ
Անոյշ գայլայլը պիտի տայ,
Եւ հեղ մրմունջը առուակին
Իւր արծադանք պիտի լինին,
Երկիրն՝ բոյրով պարուրուած,
Դաշնակցութեամբ է լցուած:
Ե՛ւ դու, Քերթողդ իմ, եւ դու
Պիտի լըռե՞ս յաւիտեան,
Եւ քնարդ այդ սիրարկու
Պիտի մընա՞յ անկենդան:
Օ՛ն, չեմ կարող դիմանալ,
Սիրտըս ուժգին կը տրոփէ,
Եւ սիրավառ հոգիս ալ
Քաղցրամունջ երգ կը խնդրէ:

ՔԵՐԹՈՂՆ

Ո՛ր իմ ոսկեհեր չքնաղ գիցուհիս,
Դու որ անմահից երկրին մէջ կ'ապրիս,
Դու որ լոյս ճակատն սուգ չէ պատած բնաւ,
Ո՛հ, գիտե՞ս արդեօք, գիտե՞ս ինչ է ցաւ:
Դու զոր միայն նուագը կը մոռցանեն,
Դու որ երգ քաղես մեր դողդոջ շրթնէն,
Կը ճանչնա՞ս արդեօք, դիմօք քստմնելի
Թռչունն այն ահեղ, որ վիշտ կ'անուանի,
Որ իւր սոսկալի ճիրանով լռին
Կեղեքէ մեր սիրտն, արիւնէ հոգին,
Երբ անգամ մ'զգայ մարդ այդ ցուրտ ճանկեր
Յօշոտել անխնայ իւր դառն աղիքներ,

Տրտում հոգւոյն մէջ կը նուաղին բոլոր
Երգ, դաշնակութիւն, փառք, սէր հրատոյժոր,
Մէկ մխիթարանք կը մնայ միայն,
Այն ալ փրկարար գրկին մէջ մահուան:
Երբ վայրի աղեղն անգութ որսորդին
Ջարնէ ըզտատրակ ի վերայ ոստին,
Մինչ գարնան անոյշ բոյրովն օրօրուած
Նուագէ թռչնիկն ձայնին զմայլած,
Յայնժամ կը դադրին դայլայլքն հրճուալից,
Մինչ յետին կայլակն իւր արեանն անբիծ
Լուռ է անասնիկն, եւ միայն վիրաց
Յաւէն՝ մերթ հառաջս արձակէ խոցուած:

Մ Ո Ւ Ս Ա Յ Ն

Անապատին մէջ խոպան
Երբ ուղեւորն անկայան
Խոնջեալ հրատապ արեւէն
Տեսնէ ուխտիս մ' հեռուէն,
Կանաչազարդ ոյր թփեր
Եւ հեզամունջ առուակներ
Ճանբուն ի ծայր աւազոտ
Կազմեն չքնաղ պարեգօտ,
Իսկոյն մոռնայ իւր ցաւեր
Եւ իւր անքուն գիշերներ,
Շունչ ժանտաբեր հարաւոյն
Եւ գազաններ սովմոյն.
Հոգին յուսով պարուրուած
Դիմէ ի վայրն գեղապանծ.
Այն զով չքին տակ ցօղուն
Հանգչի մարտինն քաղցր ի քուն
Ու երազներն ոսկեղէն
Ձգայարանս իւր գգուեն:
Այսպէս կենաց յանապատ
Յաւոց հովիտ միգապատ,
Մարդըն միայն ապաստան
Լոկ ուխտիս մ' աննման,
Մխիթարանք իւր ցաւոց
Գտնէ ի յերգս քաղցրահոծ:
Երգն է բերկրանք սրտերու,
Հոգւոց թարգման սիրարկու:
Աշխարհի մէջ ամէն բան
Ունի իւր երգ սեպհական.
Աշնան տերեւ դողդ ոջուն,
Ջայն մ' անուշակ նուաղուն,
Սառնաձնակեաց եւ լճակ
Կը շողշողայ ուր լուսնակ,
Եւ որոտմանց դղրդիւն,
Կայծակներու փայլատիւն,
Կուսին ժպիտ մանկական,

Եւ արտասուքն հէգ մօրկան
Որ կորուսած է զորդին,
Ու տառապանք տնանկին,
Տրտում հնչիւն զանգակաց,
Ճօճիւն քաղցրիկ բուրուառաց,
Մանկան միմունջք առաջին,
Ո'հ քերթուածք են երկնային:
Ի զուր, Գերթող, հոգւոյդ մէջ,
Ջանաս մարել հուրն անչէջ,
Սիրաղբ կարօտ է անոր
Հըրապոյրին երկնածոր:
Օ'ն, թող արցունքդ ցամբին,
Վանէ՛ վշտերդ մթաքին,
Քընարիդ թելքն ոսկեղէն
Հոգւոյդ ցաւերն թող երգեն:

Ք Ե Ր Թ Ո Ղ Ն

Ո'հ, կայր ժամանակ մ'որ պլպուլին պէս
Անոյշ նուագներ հիւսէի եւ ես,
Թրթրուն քընարիս քաղցրահնչիւն թել
Գիտէր ամէն ժամ սիրայեղց երգել.
Անուշակ ժպտով մ'եւ դու, իմ հրեշտակ,
Ձօնէիր ճակտիս լուսագեղ պըսակ:
Այլ թառամեցան ծիծաղքն իմ հոգւոյս,
Կորուսի համայն հաւատք, սէր եւ յոյս,
Սիրաղս չտրոփեր վասն ոսկի դափնեաց
Եւ հրաժեշտ տուի ես անմահ փառաց:
Վարդազեղ երազք ինձմէ խոյս կուտան,
Ահարկու ստուերք աշջիս կ'երեւան.
Իբրեւ ուրուական մ'աւերակաց վրայ
Վշտաց անդունդին մօտ չըջիմ ահա:
Հեռացիր, Մուսայդ, թեւերդ լուսայորդ
Կաղօտին սգոյ հանդերձիցը մօտ.
Թո՛ղ զիս միայնակ, բարձրացիր յերկին,
Ընդունէ միայն համբոյրս այս յետին:
Այլ երբ նորաւի սիրտ մի տրոփուն
Ներդաշնակութեամբ հոգի մի թրթրուն,
Մուսայ, աղերսիւ քեզ իւր մօտ ձայնէ,
Ո'հ, յայնժամ միայն, յայնժամ զիս յիշէ:
Ե. 2.

ՎԱՐՊՆ ՈՒ ՊՈՒԼՊՈՒԼԷ(1)

Էն պայծառ դարձան
Քաղցր ատինէ,
Հասնիւ քիմի(2)
Կը բացվի թեզով

(1) Տիգրանակերտի բարբառով՝ դործ Աշէշ Շի-
րինի:

(2) Պէս:

Գօնճայ վարդերէ :
Կը ծագի արեւ
Կիտայ նոր բարեւ ,
Ելի կը կանչէ
Տիս նոր կանանչէ (1)
Հաւած իր վրայ
Քո սիրած վարդէ :
Կը վազէ էս դին
Կը թըռայ էս դին ,
Ուրախութիւնով
Անուշ երգելով
Սիրուն պուլպուլէ :
Վերէն կը թըռայ
Վարդէ կը գտնայ ,
Այ , մեռայ կ'ըսէ ,
Տասէ ամիս է
Քո կարօտով :
Դըռ(2) քիչ մի տեսաւ
Վարդէ չը տեսաւ
Կ'ըլլայ սաստիկ հով
Կը թափի թուփէ :

Հաւաքեց
Զմէկածագ ՊԵՏՐՈՍ Ս. ԱՒԱՄԵԱՆ

Զ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

ԱՐՁԱԳԱՆՔ ՏՄԱՄԵՆՈՒՍ

Անծանօթ դէմքեր . — Երաժշտութեան աղբե-
ցութիւնը . — Թատերական տաղնապ . — Անձնա-
պանութիւնը յԱնդրիս :

Մեր ընթերցողաց մեծամասնութեան
անծանօթ անձանց վրայ կուգամ խօսիլ այ-
սօր : Յանցանքը Պ. Էրնէսդ Լըկուվէիօն է
եթէ Ֆրանսական Ակադեմիոյ անդամ եւ
այնքան նրբաճաշակ գրեանց հեղինակ լի-
նելով հանդերձ , անծանօթ մնացած է մեր
մէջ . մեղաւոր է Մառիա Մալիպուան եթէ
Փրանսական թատրոնին այնքան փայլուն
աստղերէն մին եւ Ալֆրէտ տը Միւսէի մէկ
սրտաշարժ ու հոգեյոյզ քերթուածով հըռ-
չակուած լինելով հանդերձ , իւր յիշատա-
կութիւնն անգամ եղած չէ մեր մէջ . թալ-
պէրկի պէս մեծանուն երաժիշտ մը իօնչ
յանցանք ունի որ իւր անունն անգամ հըն-
չած չէ մեր ականջին : Ինչ որ ալ լինի , այս
ամենէն վեր բան մը կայ , երաժշտութիւնն ,

որ բարեբաղդաբար այնքան անծանօթ չէ
մեզ , և անոր սիրոյն՝ կը համարձակինք գրել
անցեալ դէպքերու եւ մոռցուած իրողու-
թեանց վրայ :

Պ. Էրնէսդ Լըկուվէ այժմ կը հրատա-
րակէ ի Փարիզ իւր « Վաթսուն տարուան
յիշատակներն » : Առաջին հատորը լեցուն է
բազմաթիւ նկարագրութեամբք եւ շահա-
գրգիւ մանրավէպերով , որոցմէ մին թարգ-
մանելու հաճոյքին չեմ կրնար դիմագրել :

« 1856 ին էր : Մառիա Մալիպուան Փա-
րիզ եկաւ երկրորդ անգամ ամուսնանալու
համար Պէռիոյի հետ : Իւր ուղեւորութիւն-
ներն , իւր բացակայութիւններն ընդհատած
էին մեր յարաբերութիւններն , այլ ոչ բա-
րեկամութիւնը : Խնդրեց ինձմէ իւր ամուս-
նութեան վիաներէն մին լինիլ թաղապե-
տական պաշտօնատունը : Երբ պաշտօնեայն
արտասանեց օրինական նախադասութիւնն ,
« Կինը պարտի հնազանդիլ իւր ամուսնոյն » ,
այնքան զուարթ , այնքան խենդուկ ծա-
մածոութիւն մ'ըրաւ որ շահապն իսկ չկրցաւ
զսպել իւր ժպիտը :

« Գիշերն հաւաքուեցանք Թուրքա հը-
րատարակչին տունը , արուեստագիտաց մը-
տերմական երեկոյթ մը անցունելու համար :
Թալպէրկ խոստացած էր ներկայ գտնուիլ .
բնաւ լած չէր Մալիպուանի ձայնն . երգ-
չուհին եւս չէր ձանչեր զայն :

« Գալէն քիչ մը վերջը , Մալիպուան աչ-
խութիւ գնաց դէպի երաժիշտն եւ ստիպեց
զայն դաշնակին առջեւ անցնիլ :

— Նուագել ձեր ներկայութեան , ձեզնէ
առաջ , տիկին , ո՛հ , անկարելի է այդ . ես
մեծապէս կը փափաքիմ զձեզ լսել :

— Սակայն բնաւ չալիտի լսէք , պարոն
Թալպէրկ : Ես չեմ որ աստ կը գտնուիմ ,
այլ օրուան յոգնութիւններէն ընկճած հէգ
կին մը : Կոկորդիս մէջ խաղ մը մնացած
չէ : Ամենքդ ալ կը ձանձրացնեմ եթէ բե-
րանս բանամ :

— Աւելի լաւ . ես ալ համարձակութիւն
կ'առնում :

— Քանի որ կ'ուզէք , թող այդպէս ըլ-
լայ :

« Խոստումը կատարեց : Զայնը դժնդակ
էր , հանճարը բացակայ :

— Այժմ կարգը ձերն է , պարոն Թալ-
պէրկ :

(1) Տեղբանակերտցիք փոխանակ ը յօդին է ոտլոր
էն հնչէ :

(2) Դըռ :

«Թալալէրկ առաւօտուն ամուսնացած չէր, եւ նմանօրինակ ունկնդրի մը ներկայութիւնը քաջալերելով զայն, իւր բոլոր ճապկութեամբ եւ ճոխութեամբ սլարգեց ձայներու այն ներդաշնակութիւնն որով իւր նուազն այնքան հեշտալուր կ'ընծայէր: Յորչափ կը նուազէր, Մալիպուանի դէմքը կը փոխուէր, մարած աչքերը կ'ոգեւորէին, բերանը կը բացուէր կիսովին, ռեզուները կ'ուռենային:»

«Երբ Թալալէրկ աւարտեց, «Սքանչելի՛, գոչեց նա: Կարգն իմն է» եւ երկրորդ կտոր մը սկսաւ: Ո՛հ, այս անգամ, այլ եւս յոգնութիւն, այլ եւս յուլութիւն չկար: Թալալէրկ, երազացնոր, կը հետեւէր, առանց կարենալու հաւատալ, այդ փոփոխութեան: Այլ եւս նոյն ձայնն չէր այժմ: Եւ ուրիշ բան չէր կրնար ընել բայց եթէ յուշիկ իմն միմնջել. «Ո՛հ, Տիկի՛ն, Տիկի՛ն» եւ երբ կտորն վերջացաւ, «Կարգն իմն է» ըսաւ աշխուժիւ:

«Ով որ այդ օրը լսած չէ զԹալալէրկ, թերեւս ամբողջովին ճանչած չէ զայն: Մալիպուանի հանճարէն բան մը անցած էր նորա վեհանուագ դաշնակութեան մէջ. տենդը գրաւած էր զայն: Ելեկտրական հեղանուտի հոսանքներ կը թռչէին դաշնակին մատանց վրայ:

«Միայն թէ չկրցաւ լնցնել իւր նուագը: Վերջին կտորին, Մալիպուան յանկարծ սկսաւ հեծկտալ, գլուխը ձեռներուն մէջ ինկաւ, ջղաձգարար ցնցուելով արցունքներէն, եւ հարկ եղաւ քովի սենեակը տանիլ զայն: Երկար ատեն չմնաց անդ. հինգ վայրկեան յետոյ երեւցաւ բարձրագլուխ, աչերն հրացայտ, եւ դաշնակին առջեւ երթալով՝ «Կարգն իմն է» գոչեց եւ վերսկսաւ այն տարօրինակ մենամարտն եւ իրարու ետեւէ չորս կտոր երգեց, միշտ բարձրանալով, միշտ ոգեւորուելով, մինչեւ որ Թալալէրկի դէմքն ալ ծածկուեցաւ արցունքներով, ինչպէս իւր դէմքն ողողուած էր:

«Արուեստին ամենակարողութիւնն երբէք այնքան լաւ չեմ հասկցած, որքան ի տես այդ երկու մեծ արուեստագէտներուն որք առջի օրը միմեանց անծանօթ, այն օր յանկարծ կը ճանչէին զիրար, իրարու հետ մարտնչելով, մին զմիւսն ելեկտրացնելով,

եւ փոխադարձ դրդմամբ բարձրանալով արուեստին բարձրագոյն մթնոլորտներն յորս գուցէ երբէք հասած չէին ցայն վայր:»

* *

Երգչուհիներէն դերասաններն հեռաւորութիւնը մեծ չէ, եւ այս առթէն օգուտ կը քաղենք խօսելու համար փոքրիկ դէպքի մը վրայ, ոյր սակայն մեծ է նշանակութիւնը:

Յանիրաւի կը գանգատինք թէ թատրոնը չապրիր ի Պոլիս: Եւրոպական մեծագոյն մայրաքաղաքներն իսկ այժմ կը կրեն թատերական տագնապը: Ի Փարիզ, որ գլուխն է թատերական ընդհանուր շարժման, քանի մը թատրոններ իրենց տնօրէններուն զոհողութեամբ միայն կանգուն կը մնան. ի Պրուսէլ, այս ձմեռ երեք թատրոնք սնանկութիւն հրատարակեցին. ի Վիէննա եւ ի Պէրլին գործերն աւելի վատթար վիճակի մէջ կը գտնուին: Հուսկ ուրեմն ի Լոնտոն գայթակղական մեծ դէպք մը տեղի ունեցեր է վերջերս իտալական Օբէրային մէջ, Թագուհւոյն թատրոնը: Աւասիկ Ֆէկսօ ի'նչպէս կը պատմէ այս ծանր միջադէպը:

«Ծանօթի առաջին արարուածէն յետոյ, նուագածուք, որք վճարուած չէին, մերժեցին շարունակել իրենց գործը: Քառսուն վայրկեանի չափ բանակցելէ յետոյ, անոնցմէ կէսն հաւանեցան նուագել:

«Երկրորդ արարուածին, թատրոնին մեքենապետներն եւս մերժեցին զետեղել վարագոյրները:

«Այն ատեն տնօրէնն եկաւ առաջարկել հասարակութեան որ ներկայացման վերջին մասին տեղ ազգային երգը երգուի: Անբացատրելի ժխտով մը ընդունուեցաւ այս առաջարկ: Հանդիսականք սկսան թողնեն եւ թիկնաթուները կտրտել: Նոյն պահուն խմբերգիչներն եւ պարուհիները թատերասրահն եկան՝ հասարակութեան գթութիւնն հայցելով, յայտնելով թէ անօթութենէ կը մեռնէին: Խուժանը իրարու ձեռքէ կը յափշտակէր վերէն նետուած դրամներն:

«Այս սոսկալի տեսարանը տեւեց աւելի երկու ժամ: Ոչ մէկ ոստիկան չմիջամտեց եւ

Հէյպէլի փոխադրուելով, անտի Մեծ կղզիի նաւամատոյցն եւ փարոսն տեսայ 1150, 36', 5" անկիւն կազմող շառաւիղներով: Եւ դարձեալ անտի Մայթէփէի քարակոյտն ու Մեծ կղզիի նաւամատոյցն 810, 36' անկեամբ հեռաւոր դտայ:

Այս չափերն բաւական համարեցի, երբ դտայ թէ Մայթէփէի քարակոյտս ծովուն երեսէն 436. 50 մետր բարձրութիւն ունի եղեր:

Կ'ուզեմ գիտնալ թէ.

10. Քանի՞ մետր է Մեծ կղզիէն ցփարոս:

20. Քանի՞ մետր է Մայթէփէէն ցփարոս:

Յ. Ե.

Թ Ի Ի 22.

Երկու լոյսեր միացնող գծին վրայ գտնել կէտ մը որ հաւասարապէս լուսաւորուած ըլլայ, ա եւ բ ըլլալով երկու լոյսերու զօրութիւնը:

ԽՆԴԻՐ ԹԻԻ 18

Լ ՈՒԾՈՒՄՆ

Հաշուենք նախ երկայնածեւ ուղղանկիւն խորանարդի մը մակերեւոյթն եւ ծաւալը որոյ զատութիւնը են 4, 6 և 9 մէթրո:

Մակերեւոյթը կը բաղկանայ վեց ուղղանկիւններէ որոցմէ երկուքին զատութիւնը են 4 և 6 մէթրո. երկուքինը 4 և 9 մէթրո, և երկու վերջիններունը 6 և 9 մէթրո: Հետեւաբար սոյն խորանարդին ամբողջ մակերեւոյթն հաւասար է.

$$4 \times 6 \times 2 + 4 \times 9 \times 2 + 6 \times 9 \times 2 = 228$$

բառ. մէթրո:

Իսկ ծաւալն է.

$$4 \times 6 \times 9 = 216 \text{ խոր. մէթրո:}$$

Արդ գիտենք թէ սոյն խորանարդը նման (semblable) է խնդրուած խորանարդին, քանի որ երկուքին երեսները միմեանց նման են եւ համագիր անկիւններն հաւասար. ուրեմն այս երկու խորանարդներու ծաւալը, իւրեանց համագիր ծայրագծերու (arête) խորանարդին համեմատական են, իսկ մակերեւոյթնին միեւնոյն ծայրագծերու բառակուսւոյն: Հետեւաբար Մ կոչեցելով անծանօթ ծաւալն եւ Ա, 4 մէթրո երկայնութիւն ունեցող ծայրագծին համագիր ծայրագիծը, կ'ունենանք.

$$\frac{V}{216} = \frac{A^3}{64}$$

եւ

$$\frac{5}{228} = \frac{A^3}{16}$$

Վերջին հաւասարութիւնը պարզուելով կուտայ.

$$A = \frac{2}{\sqrt{19}}$$

զոր փոխադրելով առաջնոյն մէջ,

$$\frac{V}{216} = \frac{8}{64 (\sqrt{19})^3}$$

յ'որմէ,

$$V = \frac{27}{(\sqrt{19})^3} = 0.7. 320012$$

Սոյն խնդրոյ վերաբերեալ մեզ հասած լուծումներն բոլորովին սխալ են եւ կամ հաշուական սխալներ կը պարունակեն:

Օր. Մ. Զոհրապ. Գատրգիւղ. — Թիւ 17 Խնդրոյ լուծումները ուղիղ է, թէպէտ սխալմամբ ձեր անունը դրուած չէր լուծողաց մէջ.

Տ. Կ. Նաւասարդեան. Զմիւռնիա — Նոյնպէս:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

21 Մարտ 1886

Եւրոպիոյ գործադուներն ու գործաւորական խռովութիւնը, որք Լոնտոնի չրջակայներէն ու Տըքզըվիլի (Ֆրանսա) ածխահանքերէն սկսած էին, սպառնալի երեւոյթ մը կ'ստանան, համաճարակ ախտի մը պէս տարածուելով նաեւ ի Միացեալ Նահանգս, ի Պելճիա, յԱմսթերտամ. . . և վաղն ո գիտէ ո՞ր կողմ: Ամենուրեք ժողովրդեան աղքատ դասակարգն հաց կը խնդրէ դրամատէրերէն, եւ գործաւորն՝ օրականի յաւելում:

Պրիւսէլի ու Լիէժի վրայ մանաւանդ շատ խօսեցան հեռագիրը շարժուս մէջ. այս վերջին գաւառ տխուր թատր մը հանդիսացաւ ցաւալի ցոյցերու, զինուորաց միջա-

մտութեան, գործարանաց հրձգութեան եւ սպանութեանց: Առաջին ցոյցը տեղի ունեցաւ մարտ 18ին, որ Փարիզի Հասարակութեան ժեմ տարեդարձն էր. անիշխանականաց կողմէ ցրուեալ յայտարարութիւնը կանխաւ հրաւէր կը կարդային ամեն անոնց որք «ցրտէ ու նօթութենէ կը տառտային սալայատակին վրայ» երթալ համախմբիլ Ս. Լամպէռի հրապարակն: 1871էն ի վեր, ամեն տարի այդ օրն անիշխանականը սովորութիւն ունին Պեճիոյ այս կամ այն կողմն հաւաքուիլ Հասարակութեանը տօնելու համար. բայց այս տարի, տօնախմբութիւնը դառն երեւոյթ մ'ստացան և ածխահանքերու գործաւորք՝ ամեն կողմէ գունդագունդ դիմելով, կռուեցան եւ աւարեցին: Պեճիոյ միւս բաղաբաց գործաւորք չկարենալով Լիէժ երթալ, ոստիկանութեան ձեռք առած զգուշութեանց պատճառաւ, իւրաքանչիւրն իւր կեդրոնին մէջ ցոյցեր կադմակերպեց եւ խռովութիւն յարոյց: Բայց առաջին օրերու գրգռումն կ'անցնի բնականաբար եւ գործաւորական շարժումը կը տկարանայ իւր կարգին. սէտք չէ չափազանցել. հակառակ հազարաւոր գործաւորաց ջանքերուն եւ ցոյցերուն, ժողովրդեան մեծամասնութիւնն համեմատաբար հանդարտ է ի Պեճիա, Ֆրանսա, Անգլիա եւ յայլ տեղիս եւ կը փափագի օրինական միջոցներով ձեռք անցունել իւր պահանջած բարեփոխումներ: Դիտելի պարագայ մ'է որ Լիէժի եւ Պրիւսէի խռովարարաց մէջ շատ մը օտարազգի, մանաւանդ Գերման անիշխանականը կամ ընկերվարականը կան ձերբակալուած, որք գործաւորական թշուառութիւնն լաւագոյն առիթ կը համարին իրենց գաղափարները ծաւալելու համար:

Պրիւսէի ու Լիէժի խռովութիւնը ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին մանաւանդ անոր համար որ Պեճիա, Անգլիայէն յետոյ, Եւրոպիոյ կարեւորագոյն երկիրն է ածխահանքերու արտադրութեան կողմէ: Ածխահանքերու երեք գլխաւոր կեդրոն կը պարունակէ՝ Մօնա, Լիէժ եւ Շառլուա՝ ուր կ'աշխատին իբր 166,000 գործաւորք, 260 ածխահանքերու մէջ որք միջին հաշուով տարեկան 140 միլիոն ֆրանք կ'արտադրեն:

Գործաւորական խնդրէն յետոյ, կուգայ

Իռլանտական խնդիրն որ յառաջիկայ շաբաթու մէջ օրուան կարեւորութիւն պիտի ըստանայ, երբ Պ. Կլատտոնի հռչակաւոր ծրագիրը ներկայացուի Խորհրդարանին, Ազատական նախարարապետին համար իրաւամբ ըսուած է թէ քաղաքական կենքի մը բուռն արկածներուն մէջ, յորս անընդհատ կ'ենեւէ շուրջ կէս դարէ հետէ, յաջողած է յառաջ վարել ինչ որ առաջադրած է: Ոչինչ կրցած է վրդովել զնա իւր խորհրդարանական պայքարներուն մէջ, ոչ իսկ այս կամ այն կուսակցութեան բաժանումն իւր դատին պաշտպանութենէն, կամ դասալքութիւնն անոնց իսկ զորս ինք ներմուծած էր կառավարական խորհրդոց մէջ: Ինչ որ ալ լինին Պ. Կլատտոնի ընդհանուր աշխարհավարութեան վրայ տիրող գաղափարք, կարելի չէ հիացմամբ չդիտել այդ պատկառելի ծերունին որ անյողդողդ կ'ընթանայ իւր կէտ նպատակի: Եւ առաւել վսեմաշուք է այդ տեսարան, երբ մտածենք թէ Պ. Կլատտոնի այս յարատեւութիւն ո'չ թէ արդիւնք է փորձի մտածմանց կամ անձնական յամառութեան, այլ արդիւնք խոհական համոզման՝ թէ նոյն իսկ յօդուա Մեծին Բրիտանիոյ, եկած հասած է ժամն ուր այլ եւս չէ կարելի երկարել Իռլանտայի ազատագրութիւնն: Ակնհերեւ է թէ միւս կողմէ ծանր ընդդիմութիւն մը և լուրջ առարկութիւնք կը պատրաստուին. Իռլանտայի ազատագրութիւնը վսեմ դատ մ'է, բայց համոզումներ կան թէ այդ ազատագրութեամբ կրնան ի վտանգի ենթարկուիլ Անգլիոյ շահերն, մանաւանդ Տըսլլինի մէջ անկախ Խորհրդարանի մը հաստատմամբ: Ազատական նախարարապետը կը հաւատայ սակայն թէ իրերն այն վիճակին եկած հասած են, որ հակառակ կերպ կերպ դժուարութեանց, չկրնար այլ եւս յապաղիլ Իռլանտական խնդրոյն լուծումն: Անգլիոյ եւ Իռլանտայի համար, խաղաղութեան կամ ներքին պատերազմի, մահու եւ կենաց խնդիր մ'է այն: Պ. Կլատտոն իւր քաղաքական աստարիզի վերջին տարիներուն մէջ արիւրաբար խիզախեց այս խնդրոյն մէջ, առ ոչինչ զրեւով իւր ժողովրդականութիւնը կորսնցնելու վտանգն եւ կէտ նպատակի ունենալով միմիայն իւր հայրենեաց գերագոյն շահն:

Վերջնապէս ընդունուեցան Տեղային կառավարութեան նախարար Պ. Չամչուրէյի եւ Սկովտոյ նախարար Պ. Թրիվէլեանի հրաժարականը : յայտնի է թէ այս հրաժարմանց առիթ տուած էին Իսլանտական ծրարագրոյն նոյն իսկ սկզբնական կէտերուն վրայ ծագած անհամաձայնութիւնը՝ որոց վրայ խօսեցանք նախորդ Սուրհանդակով : Պ. Կլատտըռն հրաժարելոց յաջորդ անուանեց Հալիֆաքսի երեսփոխան Պ. Ճ. Սթանսֆէլտ եւ Սկովտոյի ազատական լորտ Տալհուզի :

Նորընտիր նախարարաց առաջինն՝ Ճէյմս Սթանսֆէլտ՝ ծնած է 1820 ին ի Հալիֆաքս եւ իւր կրթութիւնն ստացած Լոնտոնի Համալսարանին մէջ . 1863 ին պաշտօն վարած է ծովային նախարարութեան մէջ . 1866 ին, Լորտ Ռուսէլի վարչութեան օրով, Հընդ-կաստանի նախարար եղած է . 1868-69 ին եւրոպական նախարար, եւ 1871-74 ին տեղային կառավարութեան նախարար : 1859 էն ի վեր իւր բնագաւառը կը ներկայացունէ Երեսփոխանական Ժողովին մէջ :

Լորտ Ճոն Ուիլիէմ Բամգէյ, կոմս Տալհուզի, ծնած է 1847 ին . 1874 էն 1874, ծովային նախարարութեան մէջ հրամատարութեան պաշտօն վարելէ յետոյ, քաղաքական մեծ համբաւ չափած է 1880 ի երեսփոխանական ընտրութեանց պահուն, իւր ծայրայեղ ազատական գաղափարներուն շնորհիւ : Մինչեւ 1880 անդամ էր Երեսփոխանաց Ժողովոյն . այդ թուականին իւր հայրը՝ Լորտ Բամգէյ մեռնելով, որդին նմա յաջորդեց Լորտերու Ժողովոյն մէջ :

Ֆրանսական Մերակոյտը կարեւոր վիճաբանութիւններ ունեցաւ անցեալ շաբթու, նախնական կրթութեան Օրինաց Մըրագրին վրայ, որոյ 17րդ յօդուածը կենսական կարեւորութիւն մը կ'ընծայէր . այդ յօդուած կը տրամադրէ թէ « Հանրային վարժարանաց մէջ կրթութիւնը կ'աւանդուի միմիայն ի ձեռն աշխարհականաց » : Պ. Ժիւլ Սիմոն՝ երեւելի հանրապետական մատենագիրն, կարեւոր բանախօսութիւն մ'արտասանեց ընդդէմ այս « աշխարհականացման » ծրագրին, յանուն խղճի եւ կրթութեան ազատութեան սկզբան : Կրթական նախարար

Պ. Ժ. Սիմոնի, եւ ի վերջոյ նախարարական ծրագրին ընդունուեցաւ նոյնութեամբ 179 ձայնիւ ընդդէմ 95 ըուէից . իբր բարեփոխութիւն առաջարկուեցաւ նաեւ . որ Կըրթական Նախարարն արտօնութիւն ունենայ դպրոցի մը ուսուցիչներն անպատճառ աշխարհական մարդիկ չընելու, ըստ պահանջման տեղային պարագայից : Բայց այս բարեփոխում եւս մերժուեցաւ մեծամասնութեամբ . եւ այսպէս, հանրային կրթութեան « աշխարհականացումն » իբր պարտաւորիչ օրէնք հռչակուելով Ֆրանսայի մէջ, որոշուեցաւ կղերականաց արտաքսումն հանրային վարժարաններէն :

S. Ա.

ՎԵՐՋԻՆ ՀՆՈՒԱԳԻՐՔ

Բեդրսպուրկ, 1 ապրիլ

Կայսրն եւ կայսրուհին այսօր մեկնեցան Ռուսոյ հարաւային կողմերը (Խրիմ) :

Լոնտոն, 1 ապրիլ

Երէսփոխանաց Ժողով. — Հարցման մը պատասխանելով, Սրտաքին գործոց նախարարութեան խորհրդական Պ. Ճէյմս Պրայս յայտարարեց թէ արդի նախարարութիւնը ընդունած է նախորդ նախարարութեան յանձնառութիւններն Յունաստանի նկատմամբ . — յարեց թէ արդարեւ ուսական նաւատորմն երեք օրէ ի վեր մեկնած է Սուտայի ծովաստիւնէն, այլ ի մօտոյ պիտի վերադառնայ անդ :

Լորտերու Ժողով. — Սրտաքին գործոց նախարար Լորտ Րոզսէլլի եւ հերքեց այն զրոյցները թէ Ռուսիա ոյժ կուտայ հելլենական քաղաքականութեան եւ յարեց թէ Բեդրսպուրկի գահլճին կողմէ մտերմական հաւաստիք ստացած է ի մասին Ռուսոյ գործակցութեան Յունաստանի խնդրոյն մէջ :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիճեան
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ 1 ՐԱԳՐՈՅ